

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Արդարութիւն եւ զիջողութիւն.—Սխալ տախտիկա.—Չափ զառ եւ խմբական
յանցագործութիւն.—Յանցագործների մի ստասիսիկա.—Տայերի համեմատական
քիւր Նախնական եւ Շարուր-Դորայագեազի գաւառներում.—Ռուս գաղթա-
կանների դասը.—Կուլտուրական միջոցներ եւ բուրժամբար.—Թուրք ամբո-
խին հարստահարողներ.—Ռուսաստանի ներքին տակնապից դուրս գալու երկու
միջոցներ.—Թուրքների խնդրագիրը:

Մեր ներքին կեանքում դեռ այրող խնդիրը թուրք-հայ-
կական թշնամական յարաբերութիւններն են: Թուրքերը շա-
րունակում են աւելի նուազ չափով սպանութիւններ, թալան.
Աղաւթը իր թերթում և դանազան մութ անձնաւորութիւններ
հեռաւոր անկիւններում շարունակում են սուտ լուրերով և մո-
գնած պատմութիւններով զրգուել տգէտ և ֆանատիկոս թուրք
ամբոխը հայերի դէմ: Աղայեվի այդ քաջագործութիւնների մի
նմուշը առաջ էր բերուած «Եսկի» թերթի № 61-ում: Չնայած
որ թուրք էյնալի Սուլթանովը հեռագրով հերքեց սուտ
լուրերը՝ հայերի կողմից իբր թէ նրանում սրբապղծած
մզկիթների և բռնաբարուած թրքուհիների մասին, չնայած
որ Սուլթանովը երդում է Մարգարէի գերեզմանով որ
այդպիսի դէպքեր տեղի չեն ունեցել, Աղայեվը, շարունակե-
լով մնալ «խաղաղարական յանձնաժողովի» անդամ, ոչ միայն
զայրանում է այլ և իր «Հէյաթ»-ում փորձում է անուանարկել
ստերը հերքող թուրքին: Եւ Բագուի «խաղաղարական յանձ-
նաժողովների» միւս անդամները հնարաւոր են համարում
թոյլ տալ որ իրանց մէջ շարունակի մնալ այդպիսի մի անձ-
նաւորութիւն, իսկ նրանի «խաղաղարները» համաձայնում
են չհերքել «Հէյաթի» ստերը որ պէտք է մուտք գործեն զա-
նազան մահմեդական ծակ ու ծուկերում և թունաւորեն մի-
ամիտ ուղեղները: Չարմանալի է որ մեր «խաղաղարներ-
ը» շատ շուտով են համակերպուել իրանց թուրք ընկերա-
կիցների սխալ դատողութիւններին, կարծելով թէ սու-
տը կամ զրպարտութիւնը չհերքելով, զիջումներ անելով անե-
րես ու լիբր պահանջներին, նպաստում են խաղաղութեան:

Դա սխալ տակտիկայ է. պէտք է ճշմարտութիւնը և արդարութիւնը որոնել լինել անխնայ. եթէ թուրք «խաղաղարարները» շարունակում են պաշտպանել այն տեսակէտը որ յանցաւորներին պէտք է պատժի ենթարկել միմիայն այն պատճառով որ նրանք թուրք են, ուրեմն նրանք հասարակական տեսակէտից ընդունելի են համարում որ անմեղ զոհերին հատուցում չտրուի։ Դա արտուրդ է։ Երբ մի անհատի զրպարտում են՝ այդ անհատը դիմում է դատաստանին և պատժել տալիս յանցաւորին. երբ մի անհատի տուն հրկիզում են, կնոջ բռնաբարում են, երեխային մորթում են, տաւարը քշում տանում են, արտը փրկացնում են, տուն տեղ թալանում են—յանցաւորը ամենախիստ պատժի է ենթարկւում և զրկւածը հատուցում է ստանում։ Այժմ, ուրեմն, այդ բոլոր յանցաւորները կարող են անպատիժ մնալու համար իրանց չարագործութիւնները խմբովին կատարել։ Այդպէս է դուրս գալիս։ Եթէ ի նկատի ունենանք թէ ի՞նչ տոկոս են կազմում յանցաւորների մէջ թուրք մարդասպանները, գողերն ու աւազակները, այն ժամանակ լաւ կը հասկանանք թէ ի՞նչ վտանգաւոր խաղ է այդ ձևի «խաղաղարարութիւնը»։ Վերցրէք, օրինակի համար, «Пам. Кн. Эр. руд. на 1904 г.» պաշտօնական հրատարակութիւնը և բաց արէք այն աղիւսակը, որի մէջ առաջ են բերուած ստատիստիկական տեղեկութիւններ 1902 թ-ին Երևանի նահանգական դատարանի վճռով մեղադրուածների մասին. 188 մարդասպաններից 143 հոգի թուրք է եղել (մօտ 80%), 47 գողերից 30 թուրք (70%); Արդ, այդ մարդասպաններն ու գողերը ինչո՞ւ ենթարկեն իրանց անձը վտանգի և յանցանք գործեն զատ-զատ, քանի որ միացած ուժով համ աւելի սպանութիւններ և աւարառութիւններ կ'անեն, համ էլ անպատիժ կը մնան։ Դժբաղդութիւնը հէնց այն է որ իրանց քաջագործութիւնների ասպարէզը թուրքերը ընտրում են այն դաւառները, ուր հայ տարրը համեմատած թուրք տարրի հետ չնչին է։ Այդպէս, նոյն գրքի տուած տեղեկութիւններով.

	հայ	թուրք
Նախճաւան *) քաղաքում	2,354	6,185
Օրդուբաթ	397	4,440
Երնջակի գաւառամասում	7,490	16,663
Շարուրի	6,148	33,833

Ամբողջ Շարուր-Դարալագեհազի գաւառում բնակիչների ընդհանուր թիւը 81,408 են հաշւում, որից 55,790 թուրք և

*) Մենք դիտմամբ չենք գրում «Նախիջեւան» որ շինծու նորամուծութիւն է և տիրացուական ձեռնարկութեան մի նմուշ։

22,650 հայ: Այդ գաւառը երկու գաւառամասերից է բաղկացած—Շարուր և Դարալագեազ (հին Վայոց Ձոր): հայերը Շարուրում կազմում են ազգաբնակչութեան միայն 15⁰/₀, մինչդեռ Դարալագեազում 44⁰/₀: Այ էդ պատճառը որ այնքան տուժեցին Շարուրի հայերը, մինչդեռ զարալագեազիները կարողացան լաւ ընդդիմադրութիւն ցոյց տալ թուրքերին: Վնասուեց և Երնջակի գաւառամասը, ուր հայերը կազմում են 30⁰/₀: Առհասարակ Նախճաւանի գաւառում 116,296 ազգաբնակչութեան 44,830 է հայ, մնացածը մահմեդական: Բնականաբար հայ տարրը ընդհանուր առմամբ կազմելով միմիայն 36⁰/₀—անկարող է իր սեփական ոյժերով դիմադրել թուրքերի կազմակերպած մասսային յարձակումներին, և եթէ ամենախիստ պատիժների չենթարկուեն միշտ նախաշարժակ թուրքերը՝ հայ տարրին բնաջնջման վտանգ է սպառնում: Որ թուրք ամբոխին զսպելու միակ միջոցը խիստ պատիժներն են—այդ ապացուցուեց Պարսկաստանում, ուր կառավարութեան կտրուկ և ազդու ընթացքը իսկոյն կանգնեցրեց արեան և թալանի ախորժակներով զբաւուրած խուժանի յանցաւոր միտումները հայերի նկատմամբ: Բնականաբար, գեն. Ալիխանովի բռնած մեղմ ընթացքը թուրք յանցաւոր խուժանի նկատմամբ միայն կարող է յարատե դարձնել այն յարձակողական դրութիւնը որ նրանք բռնել են դէպի խաղաղասէր հայ տարրը: Պէտք է ի նկատի ունենալ իրականութեան մէջ գործող տգէտ, ֆանատիկոս, աւազակութեան և թալանի սովոր թուրք ամբոխի հոգեբանութիւնը, ինստինկտները, որ մնացել են հին ժամանակներից և սնուել դարերի ընթացքում գործադրուելով իրաւազուրկ ռայայի վրայ: Հասկանալի է որ միայն կուլտուրական միջոցներով ու խրատներով անկարելի է մաքառել այդպիսի տարրի դէմ: Այդ գիտէ պարսից կառավարութիւնը, գիտէր և ռուսաց տեղական իշխանութիւնը, որ տասնեակ տարիներով ստիպուած էր կախաղաններով ու տաժանակիր աշխատանքների երկիւղով կռուել մշտական աւազակային հրոսակների դէմ: այդ մաքառումների պատմութիւնը ցոյց է տալիս որ աւազակների ամենամեծ տոկոսը կազմել են թուրքերը: Նոյնիսկ ռուս գաղթականները փորձով գիտեն որ թուրք ամբոխի յարձակումների դէմն առնելու միակ միջոցը զէնքի ոյժն է: Այդպէս Զանգեզուրում գոյութիւն ունի ռուս գաղթականների մի գիւղ, Բաղարչայ, որ սկզբում ենթարկւում էր շրջակայ թուրքերի կողմից ամեն տեսակ նեղութիւնների: Ռուս այդ գաղթականները թուրքին տուած մի քնասին տասնապատիկ հատուցում տալով կարճ միջոցում այն-

պիսի ահ ու դող զցեցին դրանց ջանը որ այնուհետև թուրքերը վախենում էին ռաի հաւին անդամ քիշ անել...

Անշուշտ մենք ամենաջերմ կողմնակից ենք համերաշխ և խաղաղ համակենցադի թուրքերի հետ, որոնք եկել են մեր երկիրը, դուռով հաստատուել այդտեղ և հարևան դառել մեզ: Բայց քանի որ նրանք դեռ այնքան վայրենի են որ ամեն մի առիթից օգտւում են՝ մասսային ջարդեր, թալան, հըրկիզութիւններ սարքելու հայերիս գլխին—յիմարութիւն չի լինի դառնուկի դեր ստանձնել, երբ դիմացինը գայլութիւն է անում և այդ գայլութիւնը զանազան Աղայեմները թուրքի առաքինութիւն են համարում: Ուրեմն, ինքնապաշտպանութիւնը, որ օրէնքով էլ չի արգելուած, պէտք է լինի իւրաքանչիւր հայի առաջին ապաւէնը, իսկ երկրորդ ապաւէնն է իշխանութեան կողմից անհաւ օրէնքի խիստ գործադրութիւնը յանցաւորների նկատմամբ:

Մենք գիտենք որ կախաղանը, աքսորն ևն միայն պալլեատիւ միջոցներ են չարիքը արմատախիլ անելու գործում: Գիտենք որ աւելի հիմնական միջոցը կայանում է նրանում որ բարձրացնուի թուրք ժողովրդի մտաւոր-բարոյական մակերեւոյթը, ազատագրուի թուրքը իր խաների, բէգերի և մուլաների հարստահարիչ ճանգերից և այլն և այլն, սակայն միթէ այդ բոլոր միջոցները կախուած են հայից և այս վերջինը պէտք է քաւութեան նոխազ դառնայ թուրքի յետամնացութեան:

Ի հարկէ, երբ «խտելիզենտ» թուրքերը իրանց մամուլի մէջ յայտնեն որ դուրանից դուրս փրկութիւն չկայ, երբ դրանք ջատագովեն թուրք ամբոխի ամենաանմիտ նախապաշարմունքները, շոյեն նրա ստոր կրքերը, ոգևորեն նրան Զինգիլիսաների աւազակութիւններով և զազանութիւններով, արհամարհեն եւրոպական գիտութիւնը, իզէպականացնեն համիդական բեժիմը, վերջին դէպքերի պատճառները ծածկելու համար շահատաժի և զրպարտութեան դիմեն, քսութիւնը և շողոքորթութիւնը իմաստուն քաղաքականութիւն համարեն և այլն և այլն—էլ ի՞նչ սպասել այդպիսի «ղեկավարութեան» ենթակայ ամբոխից, որ իւրաքանչիւր ըռպէ կարող է տարերային չարիք դառնալ հարևան խաղաղ ազգաբնակչութեան համար: Մենք ցաւակցում ենք թուրք ժողովրդի ստոր վիճակը տեսնելով, սակայն արդարացի չենք համարում որ այդ վիճակից տուժողը հայը լինի, որ մազաչափ մեղ չունի թուրքի տգիտութեան և կուլտուրապէս յետամնաց լինելու գործում: Թող խաները, բէգերը, մուլաները և Աղայեմները նախ և առաջ իրանց դատապարտեն. բաւական է որքան շահագործեցին այդ ամբոխի դիւրահաւատութիւնը

և ստրկամտութիւնը: Իսկ թուրքի «գալային» առաքինութիւնները պէտք է ստիպեն, որ և հայը փոխի իր բնոյթը ըստ առածի «Съ волками жить по волчьимъ вѣтѣмъ». Դի բան որ մեզ էլ պէտք է տանի դէպի ակամայ վայրենութիւն... Միշտ սպառազինուած զրութիւնը հաղիւ թէ ձեռնառու լինի և թուրքերին, որոնք հայերից յափշտակած հարստութիւնով ընդ միշտ իրանց ապահով դգալ չեն կարող և վերջ ի վերջոյ ստիպուած են լինելու իրանց աշխատանքով ապրուստ հայթայթել. իսկ աշխատանքի համար լարուած թշնամական յարաբերութիւնը հարեանների հետ չենք կարծում որ նպաստաւոր լինի: Շիա-թուրքը հային «մուրտառ» է համարում, իսկ հայի աշխատանքից անազնիւ կերպով օգտուելը—հալալ, լաւ կ'անէր եթէ նա հակառակ կերպով վարուէր և յօժարակամ վերադարձնէր հային նորանից այդքան ստոր միջոցով յափշտակած ունեցած չունեցածը: Մեզ թւում է որ պրինց Նապոլէօնը իր կտրուկ պահանջից յետոյ չի թողնի որ թուրքերը կատակ անեն և վերադարձնեն հայերին միայն իրանց անպէտք ցնցոտիները... Պէտք է լաւ իմանան թուրքերը որ իշխանութիւնը անկարող է թոյլ տալ օրէնքի ոյժի այդ աստիճան անկում:

Անցեալ անգամ մենք հաշուել էինք հայերի կրած կորուստները Նախճաւանի կողմերում մօտ 5 միլիօն: Մեսրոպ վարդապետը աւելի է հաշուում: Եւ այդ ահելի կորուստներն պէտք է հատուցանեն թուրքերը, այդ է պահանջում ամենատարակաւն արդարութիւնը: Իսկ մինչ այդ հասարակութեան պարտքն է օգնել ֆնաստաւածներին: Պրինց Նապոլէօնը լիազօրութիւն է տուել Մեսրոպ վարդապետին՝ ժողովարարութիւններ անել տնային և երկրագործական իրերով Նախճաւանի հայերի օգտին էջմիածնի, Երեւանի և Ալեքսանդրոպոլի գաւառներում: Նոյն լիազօրութիւնը տուել է յիշեալ վարդապետին Թիֆլիսում և փոխարքան, որի կարգադրութեամբ, երեւի, կը յանձնուի թիւրքա-հայերի օգտին հաւաքած և այն գումարների մնացորդները (28 հազ.), որ կենդրոնացած էին կառավարչապետ Գօլիցինի ձեռքում:

Հայկական ջարդերը Կովկասում, հրէական ջարդերը ներքին նահանգներում, բանուորական գործադուլները, խոսիւթիւնները, սպանութիւնները, ագրարային շարժումները և բացարձակ ապստամբութիւնները միայն ցոյց են տալիս թէ ինչ սոսկալի տագնապի մէջ է Ռուսաստանի ներքին կեանքը: Յուշիմի հարուածը աւելի ևս ոստկացրեց այն դժգոհութիւնը, որ

տիրում է լայնածաւալ երկրի բոլոր խաւերում ներկայ բիւրօ-կրատիական ընթիմի դէմ: Բացի բիւրօկրատներէց և նրանց հետ շահերով կապուած մի խումբ ազնուականներից Ռուսաստանում թւում է թէ մարդ չի մնացել որ չցանկանայ նոր կարգերի շուտափոյթ յաղթանակը այս բազմաշարշար երկրում: Բիւրօկրատիական ընթիմը իր նեխիչ ազդեցութիւնը տարածել է պետական մեխանիզմի բոլոր մասերում և «երկաթէ կարգապահութիւն» անգամ անկարող եղաւ լռեցնել բողոքի ձայնը նոյն իսկ զօրքի և նաւատորմի մէջ: Ամբողջ աշխարհը ապշած էր լսելով որ ռուսաց Потемкин-ը զրահակիրը և մի ականանաւ ապստամբել էին և սկսել ուժակոծել Օդեսսան և ստաւոնացել նոյնը անել Թէօդոսիայի հետ: Երբ ամբողջ երկիրը խռովայոյզ դրութեան մէջ է և այլեւ ոչ ոք չի ուզում լսել հին ընթիմի մասին—անկասկած մասնակի, ժամանակաւոր կարգադրութիւններով անկարելի է բուժել տագնապը և մնում է հիմնական միջոցների դիմել: Այդ միջոցներն են. նախ՝ խաղաղութեան կրնքումը և երկրորդ՝ ժողովրդային ներկայացուցչութեան գումարումը: Ինչպէս յայտնի է խաղաղութիւն կնքելու գործի համար ուղարկուած է Վիտտէն լիազօրութիւններով Վաշինգտօն, իսկ ժողովրդի ներկայացուցչութեան առիթով Թագաւոր Կայսրը յունիսի 6-ին Պետերհոֆում զեմատվային և քաղաքային գործիչների ներկայացուցիչներին յայտնել էր ի միջի այլոց հետեւեալը. «Իմ կամքը, արքայական կամք է՝ անյողդողդ, և ընտրութեամբ մարդկանց հրաւիրումը պետական աշխատանքի համար պէտք է իրազօրծուի կանոնաւորապէս»:

Կայսրին ներկայացած պատգամաւորներից իշխան Ս. Ն. Տրուբեցկոյը իր ճառի մէջ ի միջի այլոց ասաց. «հարկաւոր է որ Ձեր բոլոր հպատակները հաւասարապէս և անխտիր զգային իրանց՝ ռուս քաղաքացիներ, որ ազգաբնակչութեան տարբեր մասերը և հասարակութեան խմբերը չմերժուէին ժողովրդային ներկայացուցչութիւնից և դրանով չզառնային վերանորոգութեամբ կարգերի թշնամիներ: Պէտք է որ չլինեն իրաւագուրկներ և զրկուածներ: Մենք կուզենայինք որ Ձեր բոլոր հպատակները, թէկուզ մեզ օտար կրօնով և արիւնով, համարէին Ռուսաստանը իրանց հայրենիքը, Ձեզ—իրանց Թագաւորը, որ նրանք իրանց Ռուսաստանի գաւառներ զգային և Ռուսաստանը սիրէին այնպէս, ինչպէս մենք ենք սիրում նրան: Ժողովրդային ներկայացուցչութիւնը պէտք է ծառայի միութեան և ներքին խաղաղութեան գործին»:

Ահա այդպէս են մտածում իսկական ռուս հայրենասէրները, խօսելով ոչ-ռուս տարրերի սրտի խորքից:

Յուլիսի 5-ին:

Լ. Ս.